**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ՄՄԱՌՎ-ԳՀԾՁԲ-21/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **09.12.2021թ.**

2021թ.-ի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1 հասցեում գտնվող «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ համալիր ինժեներական ծառայությունների ձեռքբերման ՄՄԱՌՎ-ԳՀԾՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Կարապետյան՝ Հիմնադրամի տնօրենի տեղակալ,
Հ. Մարկոսյան՝ Հիմնադրամի գործավար,
Ա. Հովսեփյան՝ Հիմնադրամի հաշվապահի օգնական,
Ռ. Քոչարյան՝ Հիմնադրամի հաշվապահ,
Ք. Խաչատրյան՝ Հիմնադրամի գրադարանավար:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Կարապետյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի նոյեմբերի 23-ին, Հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Համալիր ինժեներական ծառայություններ | 69999990 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | Էլ. հասցե |
| 1 | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ | 02624964 | ՀՀ, ք. Երևան, Գալշոյան 36շ. Բն 1 | +37491962666 | dares7@mail.ru |
| 2 | «Պռո ԷՄ ԷՍ» ՍՊԸ | 06948651 | ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 17 | +37441997027 | proms.llc@mail.ru |
| 3 | «Հաղարծին» ՓԲԸ | 07900546 | ՀՀ, Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 6շ. | +37493355550 | agartcin@rambler.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալի.

1. «Պռո ԷՄ ԷՍ» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ը և 1.2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը

չեն փոխարինվել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի» բառերով՝ հավաստելով, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 1.2-ի:

2. «Հաղարծին» ՓԲԸ - սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը չեն փոխարինվել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի» բառերով՝ հավաստելով, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 1.2-ի:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Համալիր ինժեներական ծառայություններ | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ | 69,999,990.00 | 115,000,000.00 | 0.00 | 115,000,000.00 |
| | | «Պոռ ԷՄ ԷՍ» ՍՊԸ | 69,999,990.00 | 58,000,000.00 | 11,600,000.00 | 69,600,000.00 |
| | | «Հաղարծին» ՓԲԸ | 69,999,990.00 | 61,000,000.00 | 12,200,000.00 | 73,200,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. 23.11.2021թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել անհամապատասխանություններ արձանագրած մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը դրա մասին ստանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գրավոր եզրակացությունը՝ հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

### 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել ՀՀ պետական եկամուտների կոմիտեից պահանջված տեղեկատվությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:00-ին ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1 հասցեում գտնվող Հիմնադրամի շենքում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Կարապետյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Հ. Մարկոսյան ________________

Ա. Հովսեփյան ________________

Ռ. Քոչարյան ________________

Ք. Խաչատրյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մ. Ղազարյան ________________